

**Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՄԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(15 օգոստոսի 2004 թ.)

*«Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ Տիրամայր եւ Կոյս...»:*
(Շարական)

Միրելի՛ հավաքացյալներ, բերկրյալ Տիրամոր հանդեպ փաճած անսահման սիրով հավաքվել ենք այս Սուրբ Խորանի առջև՝ նշելու Աստվածածնի փոքր, որն ամբողջանում է մեր Եկեղեցու հավաքքի հոր կողմից հասարակած խաղողօրհնեքով: Լուսավորչաշունչ այս Տաճարում Սուրբ Նաղորդություն ընդունելով՝ մեր մեջ ընդունում ենք Տիրոջ մարմինն ու արյունը: Վերերկրային, աննյութեղեն ինքնագոյը գոյացալ՝ մարմնանալով մայրերի մայր Սուրբ Աստվածամոր որովայնում:

Սուրբ Տիրամայր, Սուրբ Մարիամ.

Մեր աղոթաձայն մրմունջների անարփունջ ունկնդիր, մեր երկնառաք հայցերի սպասավոր: Բերկրյալ կոյս, որ հավիտենական միջնորդն է երկնի ու երկրի, մեր և Իր Միածին Որդու՝ Նիսուս Բրիսպոսի միջև:

Աստվածամոր պաշտամունք ունեցող մեր ժողովուրդը Մարիամ Աստվածածնին մարմնավորել է սրբամոտ Երզնրում, շարականերգության ու ավանդագրությունների մեջ, օրհնության խոսքերում: Մենք Զորավոր Աստվածածին, Կարմրավոր, Ծիրանավոր, Սպիտակավոր Աստվածածին և այլ անուններով սրբաբերդիներ ենք հիմնել՝ Սուրբ Կոյսին մեծարելու ու երկրպագելու համար: Ս. Աստվածածին եկեղեցիները հայոց մեջ թվով ամենաշատն են:

Մեր ժողովուրդը սրբառուց պապմություններ է հյուսել Տիրամոր գեղեցկության, մաքրության, վեհության ու մայրության մասին: Աստվածամոր նվիրական հիշատակը մշտանորոգ պահելու համար մեր դուստրերին Մարիամ, Իսկուհի, Մաքրուհի, Տիրուհի ենք կոչում ակնկալելով Տիրամոր և նրա պահապան հրեշտակների հովանին մեր դուստրերի գլխավերևում: Յուրաքանչյուր ավանդական հայ ընտանիքում անպայման հարազատ մի անկյուն կա, որտեղ զեպրեղված է զեղաթով աչքը մայրը՝ մանկան հետ: Այդ սրբապատկերի առջև ներամփոփվելով անձանձիր աղոթքներով՝ մենք սրբամոտ գրուցում ենք Տիրամոր հետ:

Սուրբ Մարիամը ներշնչանքի անսպառ աղբյուր է մեր ժողովրդի և նրա սրբեղծարար գավակների համար: Նրա կերպարը սիրելի է արվեստագետներին և արտահայտվում է արվեստի գրեթե բոլոր ճյուղերում: Նա մեր սրբեղծարար մրքի խթանիչն է: Մարեմապաշտությունը մեզանում դարձել է մայրապաշտություն: Սուրբ Մարիամ, մայրություն, մարեմություն՝ խորհուրդ է՝ շաղախված մեր նվիրական զգացմունքներին, որը հայոց մեջ

վերածվել է յուրովի մշակույթի: Դա սոսկ սեր չէ: անձին՝ ծնող մոր հանդեպ, այլ գեղագիտական հարակա մղիչ ուժ է:

Սուրբ Կույսը Նայ Եկեղեցու սրբերի սուրբն է, այն ընտրյալ կինը, որն իր վեհությամբ, առաքինությամբ ու մաքրությամբ արժանացավ կրելու այն սուրբ Պատուղը, որ Աստված առաքեց երկիր՝ որպես համայն մարդկության Փրկիչ և հարստը կյանքի աղբյուր:

Աստված մարդկության անոթ Տիրամայրը սրբերից ու հրեշտակներից բարձր է դասվում: Մենք նրան անվանում ենք սրբության խորան և երկնքի դուռ, Աստված էջք և խաղաղության միջնորդ, կենդանության բաշխիչ ու համապայծառ ծաղիկ, երկնային փառար, հասարակություն երկնի և երկրի: Աստված երկրի վրա ընկրեց շնորհընկալ կույսին, աստվածության հուրը փվեց նրան ու մարդացավ նրանում որպես Տիտու Մանուկ: Տիրամայրը, որպես մի նոր անկեղ մորենի, կրեց աստվածային հուրը, կրեց իր Միածին Որդու համար սահմանված փառապանքները և, ինչպես Միմեոն ծերունին է ասում, ընդունեց իր սրբի միջով անցնող սուրբը: Նա կարարյալ մոր փիպար է, որդեսեր, նաև որդուն հասցված փառապանքն անմռունչ կրող: Այդ նվիրումով, կենսատուժի այդ օրինակով է ձգվում ապրել յուրաքանչյուր հայ մայր: Նա փոխանցում է մեզ ընդամենի, օջախի պահպանման ոգին՝ մշտանորոգ ու արդիական:

Արդեն շուրջ 2000 տարի վերապարմվում է Ամենասրբուհի կույսի Վերափոխման հեղափոխական սրբազան ավանդությունը: Մենք ևս այսօր նորոգենք այն ու շաղախենք մեր հավարթով ու սիրով:

Տիտու Քրիստոսի խաչելությունից շուրջ 15 տարի անց ավարտվում է Տիրամոր երկրային կյանքը: Նրան ամփոփում են Գեթսեմանիում, որտեղ երեք օր անընդմեջ հնչում են հրեշտակների օրհնության և փառաբանության մեղեդիների հնչյունները: Բարդուղիմեոս առաքյալը Երուսաղեմ է գալիս ուշացումով և ներկա չի լինում կույսի հուղարկավորությանը: Վերջին հրաժեշտը փառու համար նրա խնդրանքով բացվում է սրբուհու գերեզմանը: Երբ բացում են Տիրամոր գերեզմանը, ականապես են լինում հրաշքի. Կույսի մարմինն այնպեղ չեն գտնում: Տիտու, իր խոստումի համաձայն, վերափոխել էր Իր մորը և, որպես երկնային արքայության ընտրյալ, փոխադրել երկինք:

Այս ավանդությունն է հիմքն այսօրվա փոնակապարտության՝ Վերափոխման փոնի:

Սիրելի՛ հայորդիներ, խաղողօրհներ է այսօր, օրհնվող խաղողն այս իր կենսափուլ ապրիչն առնում է հայ շինականի բազկի ուժից ու աշխատանքի բերկրանքից: Այժմ պիպի ճրմվենք այն և նրա կենսափուլ հյութը խառնենք հին գինու: Գինի, որ Տերը բաղարջ հացի հեղափոխական առաքյալներին՝ որպես Իր հեղափոխականության խորհուրդ, որ կենսափուլ ներգործությամբ վերափոխում է մեր կյանքը:

«Ես եմ որթն ճշմարիտ, եւ Նայր իմ մշակ է» (Նովի. ԺԵ 1),- ասում է Տիտու: Այսօր դարձյալ հնչում է ճշմարիտ որթափունկի ձայնը. «Եկայք առ իս...» (Մատթ. ԺԱ 29): Միաբանությամբ, միական սիրով ելնենք Տիրոջն ընդառաջ, քանզի նրանք, ովքեր չեն անսա Տիրոջ ձայնին, պիպի էլվեն ու մի կողմ նետվեն:

Օրհնում ենք այս խաղողը, որպեսզի ամենքս ճաշակենք և դառնանք Քրիստոսի նվիրյալ հավարտավորներ: Եկեք ճաշակենք օրհնված խաղողի կենսափուլ ողկույզահյութը և նորոգենք մեր մեջ Քրիստոսով հասարակած Նոր Ուխտը:

Միրելիներ, Աստված երկու Էջբ ունի. Բանի մարմնացումը Սուրբ Մարիամի որովայնում ծնունդ փվեց մարդկության Փրկչին, և մարդկության Փրկչի Էջբը սրբազնասուրբ այս փեղում ծնունդ փվեց հայ ինքնության նորովի կերպմանը, ոսկեդարյան մշակույթի արարմանը և քրիստոնեական քաղաքակրթության հասարարմանը: Փրկչի Էջբով այսփեղ հասարարվեց «փուն աղօթից ամենայն հաաարացելոց և Աթոռ քահանայապետութեան»: Այս Աթոռը համախումբ պահեց ազգը հայկազյան և օրհնեց նրա առաքելությունը հայրապետների օրհնյալ սուրբ աջով: Աստվածակառույց այս վայրից են բխում Աստծո շնորհների պարարկութանները, որով մենք մեկ ազգ ու մեկ մշակույթ ենք՝ մեկ Եկեղեցիով՝ անխառն, անշփոթ և միակամ:

Այն ազգը, որ մշակույթ չունի, ազգ չէ: Խորհրդանշական է, որ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագիրը սկիզբ է առնում հարկապես այս սրբասուրբ վայրից՝ Մայր Տաճարից: Սուրբ Մեսրոպն այսփեղ վառեց մշակույթի արև-ջահը հայոց մթին երկնակամարում և ասաց. «Եղիցի լոյս»: Եվ «Եղև լոյս»: 1700 փարիներ շարունակ հայոց ազգը Ս. Մարիամի լոյսն ամուր բռնած՝ սերնդեսերունդ հասցրեց մինչև մեր օրերը:

Այսօր, ներկա և գալիք օրերին հանդիման, ամենահայ հայը պարզամում է մեզ բանալ մեր հոգու աջքերը և ներթափանցել ոսկեդարյա ժառանգության մեջ և, վերափոխվելով, այն դարձնել կենդանի առաջնորդող ուժ և ուղեցույց:

Ս. Աստվածամայրը թող պարզևի յուրաքանչյուրիս նորանոր անսպառ ներշնչանքներ, կորով և եռանդ: